ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2026 թվականի N 479

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն և առաջնորդվելով «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետով՝ 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով պայմանագիրը միակողմանի լուծել:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն համարվել է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը www.procurement.am կայքում «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ առաջարկվել էր 10 օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում վճարումները չի կատարվել:

Այսպիսով, «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի						
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը	Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64»	7	Գրասենյակային պահարան	147 600	«Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ	04437663	ՀՀ, Արմավիրի մարզ., Համերաշխության Փ/՞Տ/29 Դաշտ 1127	09.03.2026	Հրազդանի Համայնքապետարան	«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ	Առկա չէ
	8	Պահարան	151 320							
	9	Ձգեստապահարան	207 900							
	12	Գրասեղան կողադիրով	138 000							
	13	Գրասեղան մեծ	439 999,20							

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

24 մարտի 2026թ.
ք.Հրազդան